Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. մայիսի 11-ի թիվ 127-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ....2
2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....4
3. ԱՄՓՈՓԱԳԻՐ....5
4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ....9
5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ....11
6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ....12
7. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ....28
8. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ....30
9. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ....32
10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ....33
11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....34

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 20-ի թիվ 26-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, ՀՀ կառավարության 2008թ հունվարի 10-ի թիվ 112 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 265-Ն որոշում, ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 04-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թ դեկտեմբերի 9-Ի N 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1419-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ 2020թ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում, ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի «Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին թիվ 113-Ն որոշմամբ Ավտոմոբիլային

ճանապարհների Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր ՀՀՇՆ IV-11.05.02-99, «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակում կնքված պայմանագրեր և այլն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1–ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31–ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի փետրվարի 16–ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և Հաշվեքննիչ պալատի Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դ. Չիբուխչյանը :

ՊԸՊ	Պայմանագրի ընդհանուր պայման
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ՊՀՊ	Պայմանագրի հատուկ պայման
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
հազ.	Հազար
Կարգ	04.10.2010թ թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգ»
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվության ընկերություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
Կմ	Կիլոմետր
Մ	Միջպետական
Հ	Հանրապետական
ՓՀ1	Փոփոխության հրահանգ 1

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում կազմված թվով 6 արձանագրությունները 20.04.2021 թվականին ներկայացվել են հաշվեքննության օբյեկտի ղեկավարին ստորագրելու կամ գրավոր առարկություններ և բացատրություններ ներկայացնելու համար, սակայն օրենքով սահմանված 10 օրյա ժամկետի փոխարեն հաշվեքննության ղեկավարի կողմից արձանագրությունների վերաբերյալ 06.05.2021 թվականին ներկայացվել է տեղեկատվություն, իսկ դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրով ներկայացվել են մեկնաբանություններ որոնցից մի քանիսն, ըստ էության, առարկություններ և բացատրություններ են, որոնց վերաբերյալ հաշվեքննողների մեկնաբանությունները շարադրված են համապատասխան անհամապատասխանություններում:

(1049-11001) «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ»

1. ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկում որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը չի համապատասխանում «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով սահմանված պահանջներին:

Արդյունքում, որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 387 կմ ավտոճանապարհները, որոնց պահպանության համար հաշվարկվել է 385,478.30 հազ. դրամի կատարողական, հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ և դրանց պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես հանրապետական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները 93,859.00 հազ. դրամով: 167.8 կմ ավտոճանապարհներ, որոնց պահպանման համար հաշվարկվել 216,728.00 հազ. դրամի կատարողական, հանդիսանում են *տեղական նշանակության* ճանապարհներ, որոնց կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար նույն կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները 82,938.20 հազ. դրամով: 30.5 կմ

երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանման հաշվարկվել է 17,337.20 հազ. դրամ*ի* կատարողական, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանման աշխատանքներ ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում:

Որպես Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 569.3 կմ ճանապարհները, որոնց պահպանման համար հաշվարկվել է 692,041.00 հազ. դրամի կատարողական, հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ: 58.7 կմ-ն հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել և վճարվել է 44,476.80 հազ. դրամ, այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում: 7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար կատարողականներով հաշվարկվել և վճարվել է 9,807.70 հազ. դրամ:

2. ՀՀ կառավարության 04.10.2010 թվականի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի համաձայն՝ ընթացիկ ամառային պահպանման մակարդակի գնահատման ենթակա չեն այն ճանապարհահատվածները՝ որոնք գնահատման ժամանակ ենթարկվում են հիմնական նորոգման, միջին նորոգման կամ վերակառուցման): Հիմնանորոգման (միջին նորոգման, վերակառուցման) աշխատանքները իրականացնելու ժամանակահատվածում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվել է այդ ճանապարհահատվածների պահպանության գումարների նվազեցումներ, սակայն 2 դեպքով նվազեցումները կատարվել են 4,072.10 հազ. դրամով պակաս:

3. ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանվել է, որ Կապան, Իջևան և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից: Կարգի համաձայն ճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքները, բացի երթևեկելի մասը, ներառում են նաև հողային պաստառը և օտարման շերտը, արհեստական կառուցվածքները և կահավորանքը, հետևաբար նշված ճանապարհահատվածների պահպանության աշխատանքների համար կազմված կատարողականներից պետք է նվազեցվեին երթևեկելի մասից բացի մնացած մասերի, էլեմենտների և կառուցվածքների պահպանության գումարները նույն Կարգի աղյուսակ 4-ում սահմանված տոկոսային հարաբերակցությամբ ինչը չի

կատարվել և ինչի արդյունքում չի նվազեցվել 12,812.30 հազ. դրամ: Ընդ որում՝ այդ էլեմենտները և կառուցվածքները փաստացի պահպանության են ենթարկվել համապատասխան համայնքների կողմից:

(1049-21004) Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագիր

4. «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ կնքված թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագրում կատարված փոփոխության հրահանգի ՓՀ1-ով որպես լրացուցիչ կատարման ենթակա աշխատանքներ են նախատեսել և պայմանագրում ներառել են 117696քմ ***5սմ հաստությամբ*** խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի կառուցման 893,189.25 հազ. դրամ արժեքով աշխատանքներ, այնինչ համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8.14 կետի և աղյուսակ 31-ի պահանջների, ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտի՝ խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի բարձրությունը պետք է նշանակել հաշվարկով, ***բայց ոչ պակաս 6սմ-ից***:

5. Համաձայն ներկայացրած միջանկյալ վճարման վկայագրերի «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ և «Բլաք ՍԻ Գրուփ» ՀՁ-ի (պայմանագրի CW-ICB-M6/2016-2) և «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի (պայմանագիր CW-ICB-M6/2016-3) հետ կնքված պայմանագրերի շրջանակներում 2020թ-ի ինն ամիսների ընթացքում ընդունվել են սկզբնական նախագծով նախատեսված համապատասխանաբար 175,364.44 հազ. դրամի և 100,007.00 հազ. դրամի 5սմ հաստությամբ խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի կառուցման աշխատանքներ, այնինչ ինչպես արդեն նշել ենք վերևում, համաձայն Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմեր (ՀՀՇՆ) IV-11.05.02-99-ի 8.14 կետի և աղյուսակ 31-ի պահանջների ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտի՝ խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի բարձրությունը պետք է նշանակել հաշվարկով, ***բայց ոչ պակաս 6սմ-ից:***

(1189-12001) «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր»

6. Համաձայն ՊԸՊ 36.1 կետի, աշխատանքների ավարտի նախատեսված ժամկետը պետք է երկարացվի, եթե կատարվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների այնպիսի փոփոխություն, որը հնարավորություն չի տալիս աշխատանքներն ավարտել նախատեսված օրը, առանց հավելյալ ծախսերի:

ՊՀՊ 1.1(w) կետով սահմանված է աշխատանքների ավարտի ժամկետը, որը երկարացվել է, Հիմնադրամի և համապատասխան կապալառու ընկերությունների միջև կնքված պայմանագրի փոփոխության համաձայնագրերով:

Թվով 3 պայմանագրերով, աշխատանքների ավարտի ժամկետը երկարացվել է այնպիսի հիմնավորումներով, որոնք, ըստ էության, չեն կարող հանդիսանալ ժամկետի երկարացման հիմք: Մասնավորապես, որպես հիմնավորում է ներկայացվել 2020թ հունվար և փետրվար ամիսների օդի ցածր ջերմաստիճանը կամ նշվել է, որ եղանակային պայմաններից ելնելով հնարավոր չէ իրականացնել ասֆալտբետոնե աշխատանքները, արտասահմանից պատվիրված դռները մնացել են Լարսի լեռնանցքում կամ դեռ մնացել են չկատարված աշխատանքներ: Ավարտի նախատեսված ամսաթվից ուշացնելու համար, համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 56.1 կետ, կապալառուն պատվիրատուին պետք է վճարի վնասների փոխհատուցում, ըստ պայմանագրերի համապատասխանաբար 26,541.60 հազ. դրամ, 14,586.41 հազ. դրամ և 105,900.18 հազ. դրամ:

7. Համաձայն ՊԸՊ-ի և ՊՀՊ-ի 58.1 կետի պատվիրատուն պետք է կապալառուին վճարի կանխավճարը, որը պետք է լինի պայմանագրի գումարի 20 տոկոսի չափով:

Թվով 2 պայմանագրերով Հիմնադրամը, բանկային երաշխիքի դիմաց, կապալառուին վճարել է 25 տոկոս կանխավճար կամ պայմանագրով նախատեսվածից ավել համապատասխանաբար 49,312.07 հազ. դրամով և 44,306.20 հազ. դրամով:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 1

հազ. դրամ

	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ	425100	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	10,377,048.20	10,572,749.30	10,207,649.20	10,207,649.20
2	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագրի կառուցում և հիմնանորոգում	511300	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	14,401,219.00	5,203,109.30	13,159,570.46	3,859,177.34
3	Տարրական ընդհանուր հանրակրթություն	451100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	7,263,186.20	7,264,867.78	7,209,869.98	7,209,869.98
4	Հիմնական ընդհանուր հանրակրթություն	451100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	10,260,725.60	10,260,725.60	10,173,246.50	10,177,596.4
5	Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ	463200	Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	2,229,951.60	2,124,862.30	2,124,862.30	2,124,862.30
6	Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում	451100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	2,801,071.00	2,801,071.00	2,799,810.65	2,799,810.65

	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
7	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	511300	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	6,953,481.60	4,653,849.90	1,569,555.85	1,569,555.85
8	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ)	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	2,263,116.60	1,430,039.9	622,560.83	622,560.83
9	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	9,233,794.80	4,958,296.30	3,696,201.16	5,675,713.71
10	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	10,662,757.20	5,436,356.70	4,876,210.62	4,876,210.62
	Ընդամենը			76,466,351.80	54,705,928.08	46,439,537.55	49,123,006.88

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Հաշվեքննության ընթացքում ձեռք ենք բերվել բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար (չեն տրամադրել «Պարբերական պահպանում (միջին նորոգում)» ենթածրագրի շրջանակներում պահանջած տեղեկատվությունը և (1049-21004) Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագրի 4-րդ եռամսյակին առնչվող տեղեկատվությունը):
- Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չի հայտնաբերվել:
- Հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:
- Հաշվեքննության առարկային վերաբերվող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 (1049-11001) Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ

6.1.1 Առկա է անհամապատասխանություն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջների հետ

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, համապատասխանաբար.

- միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին և ապահովում են միջազգային տրանսպորտային հաղորդակցություն,
- ինչպես նաև խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները և տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:
- Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

ՀՀ կառավարության 13.02.2014թ թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկով որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից

- 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ (կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին, սակայն չեն ապահովում միջազգային տրանսպորտային հաղորդակցություն, հանրապետության քաղաքները մայրաքաղաքին, միմյանց և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին): Նշված ավտոճանապարհներից ամառային պահպանությունում ներառվել են 289.94կմ, իսկ ձմեռային պահպանությունում ներառվել են 319.1կմ ավտոճանապարհներ, որոնց պահպանության համար հաշվարկվել են 385,478.30 հազ. դրամի կատարողականներ: Որպես միջպետական նշանակության նշված ավտոճանապարհների պահպանման

աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես հանրապետական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները 93,859.00 հազ. դրամով (տես հավելվածներ 1, 2 և 2ա):

➢ 167,8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են *տեղական նշանակության* ճանապարհներ (կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհներին): Համաձայն ՀՀ կառավարության 13.02.2014 թ-ին թիվ 265-Ն 3-րդ կետի 2-րդ ենթակետի ա) պարբերության մարզային նշանակության ավտոճանապարհների պետական ճանապարհային մարմինը տնօրինման մասով ոչ թե ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է այլ ՀՀ մարզպետներն են: Նշված ավտոճանապարհներից որպես միջպետական նշանակության ճանապարհներ ձմեռային պահպանությունում ներառվել են 130.5 կմ երկարությամբ, իսկ ամառայինում 119.5կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանության համար հաշվարկվել և վճարվել **է 216,728.00** հազ. դրամի կատարողական: Ընդ որում՝ նշված 167,8 ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար նույն կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները ***82,938.20 հազ. դրամով*** (տես հավելված 3 և 3ա):

➢ 30,5 կմ երկարությամբ ճանապարհներ, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանման աշխատանքները ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում: Նշված ավտոճանապարհներից 6.3 կմ-ն ներառել են ընթացիկ ամառային և 21.3 կմ-ն ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներում և հաշվարկել են 17,337.20 հազ. դրամի կատարողականներ (հավելված 4):

6.1.2 Առկա է անհամապատասխանություն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջների հետ

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի

- Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքին և միմյանց, մշակույթային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ,

- խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները, ինչպես նաև տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:

- Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

ՀՀ կառավարության 13.02.2014 թ-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկով որպես Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից

- 569,3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ: Նշվածներից ձմեռային պահպանություն են իրականացվել 492,1 կմ, իսկ ընթացիկ ամառային պահպանություն են իրականացվել 440,6 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վրա, որոնց պահպանության համար 2020թ.-ի կատարողականներով հաշվարկվել է 692,041.00 հազ. դրամ (հավելված 5 և 5ա):
- 58,7 կմ-ն դաշտամիջյան ճանապարհներ են, որոնց պահպանման աշխատանքները ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում: Այս ճանապարհներից ձմեռային պահպանման է հանձնվել 37,1 կմ, իսկ ամառային պահպանման՝ 28,7 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ: Ճանապարհահատվածների 2020թ.-ի պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է 44,476.80 հազ. դրամ (հավելված 6 և 6ա):
- 7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար 2020թ.-ի կատարողականներով հաշվարկվել է 9,807.70 հազ. դրամ:
- 24.4 կմ-ը միջպետական նշանակության ավտոճանապարհ:

6.1.3. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.10.2010 թ-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Կարգ»-ի 11-րդ կետով սահմանված պահանջների հետ:

Համաձայն «Կարգ»-ի 11-րդ կետի պահանջի «...միայն պահպանման աշխատանքների կատարման արդյունքում ավտոմոբիլային ճանապարհի խումբը չի կարող փոխվել դեպի բարձր խմբի: Ավտոմոբիլային ճանապարհի խմբի փոփոխությունը դեպի ավելի բարձր խումբ կատարվում է միայն տվյալ ավտոմոբիլային ճանապարհի հիմնական, միջին նորոգումից կամ վերակառուցումից հետո...»

Հ38, Հ30-Թթուջուր-Նավուր-Հ36 40.1 կմ ճանապարհահատվածի խումբը ըստ վիճակի 2019թ.-ի սպասարկման համար գնահատվել էր «վատ» և սպասարկվել է որպես ՀՎ(III) «թույլատրելի» սպասարկման մակարդակով: 2020թ.-ին, առանց ավտոմոբիլային ճանապարհին հիմնական, միջին նորոգում կամ վերակառուցում իրականացնելու ճանապարհահատվածի խումբը ըստ վիճակի գնահատվել է «բավարար», (միավորի գինը թողնելով անփոփոխ): Հարկ է նշել, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի 25.02.2021թ թիվ 50-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ եզրակացությամբ նշված ճանապարհահատվածի համար արձանագրել էինք, որ «...2018թ և 2019թ համար կատարված ավտոճանապարհների վիճակների գնահատմամբ նշված ճանապարհի վիճակը գնահատվել է «հանրապետական վատ» և 2014թ կնքված պայմանագրերի շրջանակներում 2018-2019թթ. կնքված համաձայնագրերով պահպանման է հանձնվել «թույլատրելի» պահպանում պահանջող մակարդակով, սակայն կիրառել են «հանրապետական բավարար» ճանապարհահատվածի «միջին» պահպանման մակարդակի միավորի գները, ինչը «թույլատրելի» պահպանման մակարդակից երկու մակարդակով բարձր պահպանման մակարդակ է որին ներկայացվող պահանջները ավելի բարձր են քան «բավարար» պահպանման մակարդակին ներկայացվող պահանջները: «Թույլատրելի» պահպանման մակարդակի գները կազմում են «բավարար» պահպանման մակարդակի գների ընդամենը 44.8%-ը. հետևաբար, պատվիրելով «թույլատրելի» պահպանման մակարդակ, սակայն կիրառելով ավելի բարձր մակարդակի՝ «բավարար» պահպանման մակարդակի գները՝ 2018-2019թթ կատարողականներով ավել են հաշվարկել 51,315.20 հազ. դրամ ...»: Այսինքն 2020թ-ին, այս անգամ արդեն առանց հիմնավորման ճանապարհի վիճակը «վատ»-ից փոխել են «բավարար»-ի և շարունակել են վճարել ավելի բարձր՝ «բավարար» պահպանման մակարդակի գներով, որոնց տարբերությունը 2020թ-ի համար կազմում է 25,657.68 հազ. դրամ:

6.1.4 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված պահանջների հետ:

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասով սահմանվել է, որ Գյումրի, Վանաձոր, Կապան, Իջևան, Վաղարշապատ և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության

ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից: Գյումրու, Վանաձոր և Վաղարշապատ քաղաքների տարածքներում գտնվող՝ ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքները չեն ներառվել 2020թ. ձմեռային և ընթացիկ պահպանման աշխատանքների համաձայնագրերում և այդ ճանապարհահատվածների պահպանությունն իրականացվել է համայնքների կողմից:

6.1.5 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 01.01.2008 թվականի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոններ»-ի 22-րդ կետով սահմանված պահանջների հետ:

Համաձայն ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոններ»-ի 22-րդ կետի պահանջի ճանապարհների գծանշումը, բացառությամբ 4-րդ կարգի ճանապարհներինը, պետք է կատարվի լուսանդրադարձիչ նյութի կիրառմամբ: Բացի այդ սահմանված են չոր վիճակում գծանշման համար պայծառության, չոր ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձման, անձրևի և թաց ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձման և չոր վիճակում ցրված լույսի կամ արհեստական լուսավորության դեպքում լուսարտացոլման գործակիցներ:

Պատվիրատուի կողմից աշխատանքներն ընդունելիս չեն ստուգվել վերը նշված պայծառության, լուսանդրադարձման և լուսարտացոլման գործակիցները: Բացի այդ, որևէ փաստաթղթով (սերտիֆիկատ, անձնագիր և այլն) չեն հիմնավորվել աշխատանքներն իրականացնելիս օգտագործվող ներկանյութերով վերը նշված կանոններով սահմանված պայծառության, լուսանդրադարձելիության և լուսարտացոլման ապահովման հնարավորությունը:

6.2 (1049-21004) Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագիր

6.2.1 Առկա է անհամապատասխանություն «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ կնքված թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագրում կատարված փոփոխության հրահանգի (ՓՀ1-ի) «նկարագրություն և հիմնավորում» բաժնում ինժեների կողմից առաջարկված աշխատանքների և «Ծախսերի համեմատական աղյուսակ» բաժնում ծավալաթերթի փոփոխությունների մեջ նշված աշխատանքների միջև:

Շինարարական աշխատանքների ընթացքում ծագած խնդիրների կարգավորման համար 30.01.2020 թվականին կատարվել է «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ կնքված թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագրի փոփոխություն և կազմվել Փոփոխության հրահանգ թիվ 1-ը (ՓՀ1): Փոփոխությամբ նվազեցվել են 659,301.12 հազ. դրամի աշխատանքներ և ավելացվել են 1,399,039.62 հազ. դրամի աշխատանքներ՝ արդյունքում պայմանագրային գինը ավելացել է 739,738.50 հազ. դրամով:

ՓՀ1-ով փոփոխվել են նաև կմ 76+250-կմ90+191 հատվածում պատվածքի վերականգման շերտերը: Սկզբնական նախագծով նախատեսված 4սմ հաստությամբ սառը ֆրեզումից հետո մասնակի 3սմ հաստությամբ հարթեցնող շերտի և 5սմ հաստությամբ մանրահատիկ ասֆալտբետոնից վերին շերտի կառուցման փոխարեն Ինժեները հրահանգել է կատարել

1. 4սմ ֆրեզավորում
2. Ամբողջ մակերևույթի հարթեցման շերտի իրականացում 2սմ
3. Ամրանավորող ապակեթելքավոր ցանցի իրականացում
4. 5սմ հաստությամբ կապակցող ասֆալտբետոնե շերտի իրականացում
5. 4սմ հաստության ասֆալտբետոնե մաշվող շերտի իրականացում

Չնայած նրան, որ ՓՀ1-ի «նկարագրություն և հիմնավորում» բաժնում ինժեների կողմից որպես լրացուցիչ կատարման ենթակա աշխատանք չի սահմանվել 5սմ հաստությամբ ասֆալտբետոնե ծածկի սառը ֆրեզման աշխատանքներ, «Ծախսերի համեմատական աղյուսակ» բաժնում ծավալաթերթի փոփոխությունների մեջ՝ 4.18 կետում, հաշվարկվել է 13656մ/ք 5սմ հաստությամբ ասֆալտբետոնե ծածկի սառը ֆրեզման աշխատանքներ 8,193.80 հազ. դրամ արժեքով (այդ թվում՝ ԱԱՀ):

6.2.2 Առկա է անհամապատասխանություն ավտոմոբիլային ճանապարհների Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմեր (ՀՀՇՆ) IV-11.05.02-99-ի 8.14 կետի և աղյուսակ 31-ի պահանջների հետ:

✓ «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ կնքված թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագրում կատարված փոփոխության հրահանգի ՓՀ1-ով որպես լրացուցիչ կատարման ենթակա աշխատանքներ են նախատեսել և պայմանագրում

ներառել են 117696քմ ***5սմ հաստությամբ*** խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի կառուցման 893,189.25 հազ. դրամի աշխատանքներ, այնինչ համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8.14 կետի և աղյուսակ 31-ի պահանջների ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտի՝ խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի բարձրությունը պետք է նշանակել հաշվարկով, ***բայց ոչ պակաս 6սմ-ից***:

✓ Համաձայն ներկայացրած միջանկյալ վճարման վկայագրերի «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ և «Բլաք ՍԻ Գրուփ» ՀՁ-ի (պայմանագրի CW-ICB-M6/2016-2) և «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի (պայմանագիր CW-ICB-M6/2016-3) հետ կնքված պայմանագրերի շրջանակներում 2020թ-ի ինն ամիսների ընթացքում ընդունվել են սկզբնական նախագծով նախատեսված համապատասխանաբար 175,364.44 հազ. դրամի և 100,007.00 հազ. դրամի 5սմ հաստությամբ խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի կառուցման աշխատանքներ, այնինչ ինչպես արդեն նշել ենք վերևում, համաձայն Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմեր (ՀՀՇՆ) IV-11.05.02-99-ի 8.14 կետի և աղյուսակ 31-ի պահանջների ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտի՝ խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի բարձրությունը պետք է նշանակել հաշվարկով, ***բայց ոչ պակաս 6սմ-ից:***

6.3 (1189-12001) «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր»

6.3.1 Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի ընդհանուր պայմանների (Այսուհետև՝ ՊԸՊ) 36.1 կետի պահանջների հետ

Համաձայն ՊԸՊ 36.1 կետի, աշխատանքների ավարտի նախատեսված ժամկետը պետք է երկարացվի, եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն, որ հնարավոր չլինի աշխատանքներն ավարտել նախատեսված օրը, եթե կապալառուն քայլեր չձեռնարկի մնացած աշխատանքներն արագացնելու ուղղությամբ, որն էլ նոր ծախսեր կգոյացնի կապալառուի համար:

Համաձայն ՊԸՊ 51.1 կետի փոխհատուցման միջոցառումներն են՝

- պատվիրատուն թույլ չի տա մուտք գործել աշխատանքային տեղամաս նախքան այն Կապալատուի տնօրինմանը հանձնելու ամսաթիվը:
- Պատվիրատուն փոփոխում է այլ Կապալառուների ժամանակացույցն այնպես, որ ազդեցության է ենթարկում Պայմանագրի շրջանակում Կապալառուի աշխատանքը:

- Ծրագրի ղեկավարը հրահանգում է ուշացում, կամ չի տրամադրում Գծագրերը, Մասնագրերը կամ Աշխատանքները ժամանակին իրականացնելու համար պահանջվող ցուցումները:
- Ծրագրի ղեկավարը հրահանգում է Կապալառուին բացահայտել կամ իրականացնել լրացուցիչ ստուգափորձեր աշխատանքի վերաբերյալ, որի արդյունքում թերություններ չեն բացահայտվում:
- Ծրագրի ղեկավարը անհիմն կերպով չի հաստատում ենթակապալառուի ընտրությունը:
- Գրունտային պայմանները էականորեն ավելի անբարենպաստ էին, քան կարող էին ողջամտորեն ենթադրվել Ընդունման նամակը տրամադրելուց առաջ՝ դատելով հայտատուներին տրամադրված, հանրությանը մատչելի տեղեկատվությունից և Աշխատանքային տեղամասի ուսումնասիրությունից:
- Ծրագրի ղեկավարը տալիս ցուցումներ Պատվիրատուի կողմից ստեղծված անկանխատեսելի իրավիճակների առնչությամբ կամ լրացուցիչ աշխատանք, որը պահանջվում է անվտանգության կամ այլ պատճառներով:
- Այլ կապալառուները, պետական մարմինները, հաղորդուղիները կամ Պատվիրատուն չեն աշխատում Պայմանագրով սահմանված այլ ժամկետներում կամ սահմանափակումների շրջանակում և պատճառ են հանդիսանում ուշացումների կամ Կապալառուի համար լրացուցիչ ծախսերի:
- Կանխավճարն ուշանում է:
- Պատվիրատուի ցանկացած ռիսկերի ազդեցությունները Կապալառուի վրա:
- Ծրագրի ղեկավարն անհիմն ուշացնում է Ավարտական ակտի տրամադրումը

ՊՀՊ 1.1(w) կետով սահմանված է աշխատանքների ավարտի ժամկետը, որը երկարացվել է, Հիմնադրամի և համապատասխան կապալառու ընկերությունների միջև կնքված պայմանագրի փոփոխության համաձայնագրերով:

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի թիվ 2 դպրոցի կառուցման A-05GQ պայմանագրի թիվ 6 փոփոխության համաձայնագրով, Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի թիվ 2 դպրոցի կառուցման A-02AR պայմանագրի թիվ 5 փոփոխության համաձայնագրով և Երևանի թիվ 135 դպրոցի կառուցման A-04YN պայմանագրի թիվ 4 փոփոխության համաձայնագրով ավարտի ժամկետները երկարացվել են այնպիսի հիմնավորումներով, որոնք չեն համապատասխանում ՊԸՊ 36.1 և 51.1 կետերով սահմանված հիմքերին: Մասնավորապես.

✓ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի թիվ 2 դպրոցի կառուցման A-05GQ պայմանագրի թիվ 6 փոփոխության համաձայնագրով ավարտի ժամկետը երկարացվել է 60 օրով, ինչը հիմնավորել են արտակարգ դրությամբ պայմանավորված շինարարական աշխատանքների սահմանափակմամբ և հունվար և փետրվար ամիսներին օդի ցածր ջերմաստիճանով, այնինչ հունվար և փետրվար

ամսին օդի ցածր ջերմաստիճանը չի համապատասխանում ՊԸՊ-ի 36.1 և 51.1 կետերով ժամկետի երկարացման համար սահմանված հիմքերից որևէ մեկին, իսկ արտակարգ դրությամբ պայմանավորված շինարարական աշխատանքների կատարումը, համաձայն պարետի 24.03.2020թ. թիվ 14 և 12.04.2020թ թիվ 37 որոշումների, սահմանափակվել են 24.03.2020թ-12.04-2020թթ՝ ընդամենը 20 օրով:

Ավարտի նախատեսված ամսաթվից 40 օր ուշացնելու համար, համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 56.1 կետ, կապալառուն պատվիրատուին պետք է վճարի 26,541.60 հազ. դրամ վնասների փոխհատուցում:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Պայմանագրի թիվ 6 համաձայնագրի կապակցությամբ տեղեկացնում ենք, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում COVID-19-ով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում պարետի որոշմամբ շինարարական աշխատանքների իրականացումը արգելվել է 20 օրով, սակայն համավարակի առկայությունը խոչընդոտել է շինարարական աշխատանքների արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես բռնկման դեպք է եղել շինարարական հրապարակում, որը հանգեցրել է նաև մեկ աշխատակցի մահվան: ՀՏՀՀ-ի կողմից Պայմանագրի ժամկետի երկարաձգման ժամանակ ՀՏՀՀ–ի կողմից հաշվի են առնվել նաև վերոգրյալ գործոնները:

*Եզրակացությամբ նշված Պայմանագրի 36.1 կետի բովանդակությունը ներկայացված է որոշակի մեկնաբանությամբ: Պայմանագրի նույն 36.1 կետի բառացի նկարագրված բովանդակության համաձայն՝ «36.1 Ծրագրի ղեկավարը պետք է երկարացնի ավարտի նախատեսված ժամկետը, **<u>եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն</u>**, որ հնարավոր չլինի աշխատանքներն ավարտել նախատեսված օրը»: Քանի որ ի սկզբանե հնարավոր չէր պլանավորել օդի հնարավոր ցածր ջերմաստիճանի առկայությունը, ՀՏՀՀ-ն այն գնահատել է ժամանակի փոխհատուցման միջոցառում, որի հիմքում դրվել է պետական լիազոր մարմնից ստացված տեղեկատվությունը, հետևաբար, մեր կարծիքով, աշխատանքների ավարտի ժամկետի երկարաձգումը համարվում է պատշաճ հիմնավորված և Եզրակացությամբ նշված գումարի գանձման անհրաժեշտությունը բացակայում է:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Չեն ընդունվում, քանի որ հունվար և փետրվար ամիսներին օդի ցածր ջերմաստիճանը, շին հրապարակում որևէ հիվանդության բռնկումը կամ մահը չի հանդիսանում Պատվիրատուի կողմից ստեղծված անկանխատեսելի իրավիճակ և ՊԸՊ-ով սահմանված երկարացման հիմք չեն հանդիսանում: Ընդ որում, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 26.09.2011թ.-ի թիվ 167-Ն հրամանով հաստատված «Շինարարության կլիմայաբանության» ՀՀՇՆII-7.01-2011-ի

հավելված 1-ի, Գավառում հունվար-փետրվար ամիսների բազմամյա միջին ամսեկան ջերմաստիճանները կազմում է -7,5 աստիճան և -6,3 աստիճան, այնինչ համաձայն հաշվեքննվողի ներկայացրած տեղեկանքի, 2020թ-ին այն կազմել է համապատասխանաբար -6,98 աստիճան և -4,35 աստիճան կամ բազմամյա միջին ամսեկանից ավելի բարձր:

Բացի այդ հարկ է նշվել, որ 36.1 կետը մեջբերվել է որոշակի մեկնաբանությամբ, համաձայն ՊՀՊ 36.1 կետի «...աշխատանքների ավարտի նախատեսված ժամկետը պետք է երկարացվի, եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն, որ հնարավոր չլինի աշխատանքներն ավարտել նախատեսված օրը, *<u>եթե կապալառուն բայլեր չձեռնարկի մնացած աշխատանքներն արագացնելու ուղղությամբ, **որն էլ նոր ծախսեր կգոյացնի կապալառուի համար»</u>***:

✓ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի թիվ 2 դպրոցի կառուցման A-02AR պայմանագրի թիվ 5 փոփոխության համաձայնագրով ավարտի ժամկետը երկարացվել է 24 օրով, ինչը հիմնավորել են փոփոխությունն իրականացնելու համար կազմված զեկուցագրում նշված շինարարության ընթացքում առաջ եկած առանձին նոր աշխատանքներով և «Գազպրոմ Արմենիա»-ի կողմից գազատարին գազի միացման ուշացմամբ, որի միացումից հետո պետք կատարվել կաթսայատան, ջեռուցման համակարգի և խողովակաշարերի փորձարկում:

Նշված հիմնավորումները չեն համապատասխանում ՊԸՊ-ի 36.1 և 51.1 կետերով ժամկետի երկարացման համար սահմանված հիմքերից որևէ մեկին:

Ավարտի նախատեսված ամսաթվից 24 օր ուշացնելու համար, համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 56.1 կետ, կապալառուն պատվիրատուին պետք է վճարի 14,586.41 հազ. դրամ վնասների փոխհատուցում:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Եզրակացությամբ նշված Պայմանագրի 36.1 կետի բովանդակությունը ներկայացված է որոշակի մեկնաբանությամբ: Պայմանագրի նույն 36.1 կետի բառացի նկարագրված բովանդակության համաձայն՝ «36.1 Ծրագրի ղեկավարը պետք է երկարացնի ավարտի նախատեսված ժամկետը, եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն, որ հնարավոր չլինի աշխատանքներն ավարտել նախատեսված օրը»: Հարկ է նշել, որ դռները Լառսի լեռնանցքում մնալու հանգամանքը պայմանագրի ժամկետի երկարաձգման մասին զեկուցագրով չի դիտարկվել, իսկ զեկուցագրերով ներկայացված հիմնավորումները ՀՏՀՀ-ի կողմից համարվել են ժամանակի

փոխհատուցման միջոցառումներ, որոնք բխում են պայմանագրի վերոնշյալ կետի մեկնաբանությունից: Ամփոփելով նշվածը գտնում ենք, որ ժամկետի երկարաձգումը եղել է հիմնավորված, իսկ եզրակացությամբ նշված գումարը գանձելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Չի ընդունվում, քանի որ առարկություններում չի նշվել, թե որ իրավական ակտի հիման վրա է ՀՏԶՀ-ն (Հիմնադրամը) իրեն վերապահում իրավասություն ՊԸՊ-ի 51.1 կետում սահմանված փոխհատուցման միջոցառումներից զատ այլ երևույթները դիտարկել որպես ժամանակի փոխհատուցման միջոցառում: Բացի այդ 36.1 կետը մեջբերվել է որոշակի մեկնաբանությամբ, համաձայն ՊՀՊ 36.1 կետի «...աշխատանքների ավարտի նախատեսված ժամկետը պետք է երկարացվի, եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն, որ հնարավոր չլինի աշխատանքներն ավարտել նախատեսված օրը, *<u>եթե կապալառուն քայլեր չձեռնարկի մնացած աշխատանքներն արագացնելու ուղղությամբ, **որն էլ նոր ծախսեր կգոյացնի կապալառուի համար»</u>***: Այսինքն, ավարտի ժամկետի երկարացման հիմք կարող են հանդիսանալ այնպիսի լրացուցիչ աշխատանքները, որոնց կատարմամբ հնարավոր չլինի աշխատանքներն ավարտել նախատեսված օրը, *<u>եթե կապալառուն քայլեր չձեռնարկի մնացած աշխատանքներն արագացնելու ուղղությամբ, **որն էլ նոր ծախսեր կգոյացնի կապալառուի համար:***</u> Ընդ որում, համաձայնագրի կնքումից հետո կատարվել է 26,124.00 հազ դրամի լրացուցիչ աշխատանքների ավելացում և 26,508.00 հազ դրամի աշխատանքների նվազեցում կամ փաստացի տեղի է ունեցել աշխատանքների ծավալների նվազեցում:

Իսկ արտակարգ դրությամբ պայմանավորված շինարարական աշխատանքների կատարումը, համաձայն պարետի 24.03.2020թ. թիվ 14 և 12.04.2020թ թիվ 37 որոշումների, սահմանափակվել են 24.03.2020թ-12.04.2020թթ՝ ընդամենը 20 օրով:

Ավարտի նախատեսված ամսաթվից 24 օր ուշացնելու համար, համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 56.1 կետ, կապալառուն պատվիրատուին պետք է վճարի 14,586.41 հազ. դրամ վնասների փոխհատուցում:

✓ Երևանի թիվ 135 դպրոցի կառուցման A-04YN պայմանագրի թիվ 4 փոփոխության համաձայնագրով ավարտի ժամկետը երկարացվել 100 օրով: Ինչը հիմնավորել են ենթադրվող մոտ 100,000.00 հազ. դրամի լրացուցիչ աշխատանքների կատարմամբ, շահագործող ընկերությունների կողմից տեխնիկական պայմանների տրամադրման ուշացմամբ, ճանապարհների հատման համար Երևանի քաղաքապետարանի թույլտվության բացակայությամբ,

նախագծային որոշակի լուծումների բացակայությամբ և համավարակի հետ կապված պարետի որոշմամբ շինարարական աշխատանքները 20 օրով արգելելը:

Համավարակի հետ կապված պարետի կողմից շինարարական աշխատանքները 20 օրով կասեցնելու հիմքով արդեն իսկ փոփոխության համաձայնագիր թիվ 3-ով աշխատանքների ավարտի ժամկետը երկարացվել է, իսկ հիմնավորումները չեն համապատասխանում ՊԸՊ-ի 36.1 և 51.1 կետերով ժամկետի երկարացման համար սահմանված հիմքերից որևէ մեկին:

Ավարտի նախատեսված ամսաթվից 100 օր ուշացնելու համար, համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 56.1 կետ, կապալառուն պատվիրատուին պետք է վճարի 105,900.18 հազ. դրամ վնասների փոխհատուցում:

Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացատրությունները

Պայմանագրային ժամկետի 100 օրով երկարաձգումը պայմանավորված է լրացուցիչ աշխատանքների իրականացմամբ (շուրջ 100,0 մլն դրամ), նախագծի հեղինակի կողմից որոշ նախագծային փոփոխությունների ուշ իրականացմամբ և այլ պատճառներով: Ժամկետների երկարաձգման պատճառների վերաբերյալ առկա է համապատասխան զեկուցագիր, որը ներկայացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատին:

Եզրակացությամբ նշված Պայմանագրի 36.1 կետի բովանդակությունը ներկայացված է որոշակի մեկնաբանությամբ: Պայմանագրի նույն 36.1 կետի բառացի նկարագրված բովանդակության համաձայն՝ «36.1 Ծրագրի ղեկավարը պետք է երկարացնի ավարտի նախատեսված ժամկետը, եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն, որ հնարավոր չլինի աշխատանքներն ավարտել նախատեսված օրը»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

